Քաղաքացիական հասարակության ինստիտուտը և Հայկական գրադարանային ասոցիացիան, ՀՀ արտաքին գործերի նախարարության աջակցությամբ, հայտարարում են «Նամակ Աննը Ֆրանկին» խորագրով շարադրությունների մրցույթ:

«Սովորել Աննը Ֆրանկի հետ» ծրագիրը իրականացնում է Քաղաքացիական հասարակության ինստիտուտը, Հայաստանում և Վրաստանում Նիդերլանդների դեսպանության ֆինանսական աջակցությամբ:

Նամակ-շարադրությունը պետք է արտացոլի հեղինակի վերաբերմունքը Աննը Ֆրանկի և նրա պատմության նկատմամբ:

Մրցույթի պայմանները

- Մրցույթին կարող են մասնակցել **մինչև 18** տարեկան ՀՀ բոլոր քաղաքացիները:
- Շարադրությունը պետք է գրված լինի հայերեն:
- Շարադրության ծավալը չպետք է գերազանցի 800 բառը:
- Շարադրությունների ընդունման վերջնաժամկետն է ս.թ. **մարտի 30**-ը (ներառյալ):
- Շարադրությունները պետք է ուղարկել **annefrank@csi.am** հասցեին՝ թեմա (subject) բաժնում նշելով «Նամակ Աննը Ֆրանկին»:
- Մասնակիցները շարադրությանը կից նամակում պետք է նշեն անունը, ազգանունը, տարիքը, բնակության վայրը (քաղաք/համայնք) և հեռախոսահամարը:
- Մրցույթը հաղթահարած **12 լավագույն աշխատանքների հեղինակները** Երևանում կմասնակցեն Աննը Ֆրանկին նվիրված միջոցառումներին (ապրիլի 16-17):
- Ապրիլի 17-ին Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում կայանալիք ծրագրի ամփոփիչ միջոցառման ընթացքում լավագույն աշխատանքների հեղինակները կպարգևատրվեն: